

ՀԱՆԳԻՍՏ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԲԱՐՍԵՂ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ (1924—1994)



1994 թվականի օգոստոսի 24-ին, կյանքի 70-րդ տարում, վախճանվեց արժանապատիվ Տ. Բարսեղ քահանա Մի՛րզախանյանը:

Հանգուցյալ տեր հայրը ծնվել է 1924 թվականին Իրանի Փերիա գավառի Հազարջրիբ գյուղում:

Նախնական կրթությունն ստացել է տեղի Մեսրոպյան դպրոցում:

Մինչև 1969 թվականն զբաղվել է հողագործությամբ և միաժամանակ հայոց եկեղեցիներում մասնակցել եկեղեցական արարողություններին՝ որպես դպիր:

1969 թվականին ընտանիքով ներգաղթել է Մայր Հայրենիք և բնակություն հաստատել Արարատի շրջանի Լուսառատ գյուղում:

1971 թվականի օգոստոսի 1-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանի, ձեռնադրվել է քահանա և հոգևոր ծառայության անցել Հոկտեմբերյանի շրջանի Նոր Արմավիր գյուղի Ս. Դավիթ եկեղեցում:

Սույն թվականի օգոստոսի 26-ին, ուրբաթ օրը, Արմավիրի շրջանի Բամբակաշատ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց

հոգեշնորհ Տ. Աթանաս աբեղա Մովսիսյանը և կատարեց հանգուցյալ տեր հոր վերջին օծման կարգը:

Հանգուցյալ տեր հոր մարմինն ամփոփվեց Արմավիրի շրջանի Խանջյան գյուղի գերեզմանատանը:

Հանգուցյալն իր հոգևոր ծառայության ողջ ընթացքում իր համեստությամբ, ազնվությամբ և պարտաճանաչությամբ արժանացել է Արմավիրի շրջանի և Հոկտեմբերյան քաղաքի հավատացյալ ժողովրդի հարգանքին:

Հանգիստ Տ. Բարսեղ քահանա Միրզախանյանի ոսկորներին: